Ը. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 5 ՓԵՏՐՎԱՐ 1905 ԹԻՒ 687

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսին համար 20 սանթիմ։ Երկրին ամեն անգամներու համար 20 0/0 զեղչ կըլայ։

—o—

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

ԱԼԱՐՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԳՐԱԿԱՆ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Wien Mschit W. 4.

Եպտամի հրատարակ դրկել խմբագրատանս հասցեին

Редакция на вѣстникъ „Пѫржумъ“
Варна

Redaction du journal „Char,oum“
(Bulgarie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԱՌԹԻՒ

—)o(—

Պատմում են թէ հին ժամանակներում անգլիացի մի ճանապարհորդ գալով Ղարաբաղ, ուզում է տեղական հայ ժողովրդի մտաւոր զարգացման մասին գաղափար կազմել և այդ նպատակին հասնելու համար իրընդրում է որ իրեն ներկայացնեն ամենասրամիտ հային։ Անգլիացուն պարզում են որ իր լեզուն հասկացող հայ չը կայ, բայց անգլիացին չէ յուսահատվում ու թախանձագին խնդրում է որ իր փափաքը կատարեն։

Ղարաբաղում այդ միջոցին ապրելիս է եղել իր սրամտութեամբ հռչակված Պըլը Պուղին, (խենթ Պողոսը) որին ամբոխը Պըլը մակդիրը կպցրել էր, անշուշտ Պուղիի իրեն չը նմանելու պատճառով... Ահա անգլիացուն ներկայացնում են Պուղիին։

Անգլիացին Պըլը Պուղիին դէմ յանդիման գալուն պէս ցոյց է տալիս իր երեք մատերը։

Պուղին տեսնելով անգլիացու երեք ցցված մատերը, ինքն էլ բռունցքն է բարձրացնում։ Դրանից յետոյ անգլիացին մատով օդի մէջ շրջանակ է գծում։ Պըլը Պուղին էլ այդ շարժմանը պատասխան՝ ինքն էլ շրջանակ է գծում օդի մէջ և մէջ տեղիցը կիսում։

Անգլիացին շատ գոհ մնալով Պուղիի պատասխաններից, նրա ձեռքը սեղմելով բաժանվում է։ Վերջը հասարակութեան կարեւոր անդամները թարգմանի միջոցով անգլիացուն հարցնում են թէ՝ ինքը Պուղիին ի՞նչ ասաց և Պուղին ինչ պատասխանեց։

Նա պատասխանում է,— երեք մատս ցոյց տալով ուզեցի ասել որ Աստուածը երեք անձից է կազմված. հայր, որդի և հոգին սուրբ. իսկ Պուղին իմ միտքը ըմբռնելով ցոյց տուեց բռունցքը՝ ասելով որ երեք անձ մի աստուածութիւն են կազմում. ուրեմն նա ծանօթ է աստուածաբանութեան հետ։

Սրկրորդը՝ շրջանակ գծելով, ես ուզեցի ասել որ երկիրը գընդաձեւ է. իսկ Պուղին իմ միտքը ըմբռնելով՝ այդ գունդը կէս արաւ, ուզելով ասել թէ գնդաձեւ է և բաժանված երկու կիսագնդերի Ուրեմն նա ծանօթ է և աշխարհագրութեան հետ։

Ղարաբաղցիք անգլիացու այդ բացատրութիւնը լսելով հասկացան որ այստեղ մի խոշոր թիւրիմացութիւն պէտք է լինի. որովհետեւ գիտէին թէ Պուղին, իր ամբողջ սրամտութեամբ հանդերձ վերոյիշեալ գիտութիւններից բոլորովին բոբիկ էր։ բայց գոհ էին որ գիտնական անգլիացու մօտ իրենց գիժ Պուղին տեղական հայ հասարակութիւնը պարզերես հանեց։ Այնու ամենայնիւ ուզեցին հասկանալ թէ Պուղին ի՞նչպէս էր հասկացել անգլիացուն և ի՞նչ պատասխան էր տուել։ Ու դիմեցին Պուղիին.

—Պուղի, անգլիացին քեզ ի՞նչ ասեց և դու նրան ի՞նչ պատասխանեցիր։

Պուղին պատասխանում է.

Անգլիացին մատերը չռելով ուզեց ասել. «Պուղի աչքերդ կը հանեմ. ես էլ պատասխանեցի, հապա այդ բռունցքը չե՞ս տեսնում։

Յետոյ օդի մէջ կոլորակ գծելով, անգլիացին ասեց—մի ձմերուկ ունեմ. ես էլ կէս արի այդ ձմերուկը՝ ասել ուզելով թէ կէսն էլ ինձ տուր։

Պուղին անգլիացուն հասկացել էր իր զարգացման և աշխարհայեցողութեան համաձայն, և ըստ երեւոյթին շատ համապատասխան բացատրութիւն տուել անգլիացու արտայայտած մտքերին։

Հիմա իմ բաց նամակները, որոնք շատ պարզ լեզուով են գրված, զանազան մարդկանց կողմից բացատրվում են ըստ իրենց հասկացողութեան և աշխարհայեցողութիւնների ու տրամադրութիւնների։ Դաշնակցութեան հակառակորդները բացատրում են այնպէս, ինչպէս որ իրենց փափագելի է և զանազան անհիմն ենթադրութիւնների մէջ մտնում. զանազան դաշնակցական անուն կրող մարդիկ մեր ասածները, իրենց խելքով, ֆնասակար գտնելով կազմակերպութեան շահերին, զանազան չչուկներ են տարածում և ճգնում գրածներիս անձնական գոյն տալ և ցեխոտել այն, ինչ որ մաքուր, բիւրեղացած հայրենասիրութեան արդիւնք է և ճշգրիտ արտայայտութիւնը մեր յեղափոխական կեանքի դառն իրականութեան։

Բայց իմ փոյթը չէ։ Ես այդ նամակները ուղղել եմ Դաշնակցական բանիմաց ընկերներին շատ երկար բարակ խորհելուց յետոյ. օգտուելով մեր կազմակերպութեան ամենաբարձր առաւելութիւնից, ընկերներին տրված անհատական անկախութիւնից ու համոզված եմ որ մի օգտակար գործ եմ կատարել դէպի հայրենիքը և դէպի մեր ազատագրութեան գործը։ Ինձ չեն հետաքրքրում Դաշնակցութեան հակառակորդները իրենց բռնած դիրքով թէ դէպի կազմակերպութիւնը և թէ դէպի իմ անձը, ինչպէս չէին հետաքրքրում ինձ երբ ես նրանց դէմ մաքառում էի ու կը շարունակեմ մաքառել առիթը ներկայացած պարագային։ Ինձ չեն հետաքրքրում և այնտեսակ դաշնակցականների բռնած դիրքը դէպի իմ անձը, որոնք ամեն մի գաղափարական քայլ չարչիական արշնով են չափում, ըստ իրենց նկարագրի, խելքի և հոգեբանութեան։

ՎԱՐԴՕ

ՔԱՂՈՒԱԾՔ ԹԱՅՄԶԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԷՆ ՌՈՒՍ ՃԱԲՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՌԹԻՒ

—o—

(Շար. նախորդ թիւեն)

Ռուսիա դիմացկուն և միջոցները շատ խոշոր են ու վերջի վերջոյ պիտի յաղթէ ճաբոնցիները, այս փաստը ներկայացուած այս անորոշ ձեւով մարգարէութեան վերածուելու վտանգին ենթարկուած է, հետեւաբար դժուար է զայն պաշտպանելը ինչպէս և ուրանալը։ Ռուսական միջոցները իրապէս շատ մեծ են, բայց դրական չեն։ Եթէ բանկ մը իր ստակները թուղթի վերածէ թէ եւ աղէկ. բայց երբ դժուար ըլլայ արծաթի վերածել, ապահովապէս պիտի դադրեցնէ իր գործառնութիւնը։ Երբ դրամատուները իրենց դրամները ետ պահանջեն անսպասելիօրէն։ Ռուսիոյ գործը այդ վիճակին մէջ կը գտնուի։ Անոր միջոցները որոնք երեւակայութեան վրայ տպաւորութիւն կը գործեն մեծ մասամբ արծաթի չեն կրնար վերածուիլ, ուրեմն չպիտի կրնան պատերազմը շարունակելու նպատակներուն ծառայեցնել։

Ռուսիան լաւ վարկ ունի. որովհետեւ ան յաճախ փոխառութիւններ կնքած է, դրամատէրները վարժուած են փոխ տալ։ Եթէ ան ալ Ճաբոնի չափ դրամական հրապարակին վրայ անձանոթ ըլլար, անոր փոխառութիւնները աւելի դժուարութեանց պիտի հանդիպէին։ Բայց առանձնապէս Ռուսիոյ դիմացկունութիւնը ինչի մէջ կը կայանայ։ Անոր տիրապետական քաղաքականութիւնը նոյն յամառութեամբ կընթանայ. ինչ յամառութեամբ որ կընթանայ իր ներքին զարգացումը խորտակող քաղաքականութիւնը։ Աչքի զարկող մէկ պատմական անգիտակից ռուսական դիմացկունութիւն մը կայ թշնամու մը հանդէպ, որ խորտակուեցաւ ռուսիոյ կլիմայական պայմաններէն։ Բայց ո՞ւր ենք հանդիպած ռուսական այդ բացառիկ դիմացկունութեան, երբ ան պատերազմի բռնուեր է կազմակերպուած պատերազմական երկիրներու հետ։

Ռուսիան չկրցաւ յաղթել Ֆրիտրիխը. թէեւ Բրուսիան այն ատեն աղքատ և համեմատաբար պզտիկ պետութիւն մըն էր։

Նաբոլէոնեան պատերազմներու ատեն ան միւս ժողովուրդներէն աւելի դիմացկունութիւն ցոյց չը տուաւ։

Կրիմի պատերազմն ալ հարիւ թէ կարելի ըլլայ ռուսական դիմացկունութեան օրինակ բերել։ Եթէ կուզենք համեստ ըլլալ. հեռի մնալ ինչ որ դեղին վտանգի մասին դատողութիւններէ, պէտք է որ խոստովանինք թէ այս պատերազմին մէջ արտայայտուած դիմացկունութիւն մը եթէ կայ այդ ալ ճաբոնցիներու քով կը ներկատուի։ Երբ նոյն ձեւով աչքի առջեւ կառնենք Ճաբոնիայի ելեւմտից

վիճակը, մենք պ՛տի տեսնենք որ ան շատ գոհացուցիչ է, մանաւանդ որ ճարոնացիները այսօրուընէ արդէն միջոցներ պատրաստած են պատերազմը երկրորդ տարին շարունակելու համար։

Անկասկած է որ ժողովուրդը կզգայ հարկերուն ծանր բեռը, բայց ան այդ բեռը գոհութեամբ կը տանի եւ նշաններ չեն երեւիր որ ան կը մտենայ իր ելեւմտական սիստէմին կազմալուծման։

Դեռ աւելի։ Ճարոնական վաճառականութիւնը ծաղկած վիճակի մէջ է, և մաքսային տուրքը վերջին տարին զգալի կերպով շատցեր է։ Ճարոնի բնակչութիւնը հազիւ կը հաւասարի Ռուսիոյ բնակչութեան մէկ երրորդին. բայց ան միաձոյլ է, դաստիարակուած, եռանդուն և բարձրօրէն կազմակերպուած։ Ռուս բնակչութիւնը իրր ամբողջութիւն, հիշդ աւոր հակառակը կը ներկայացնէ։

Տարուան մը պատերազմէն յետոյ ճարոնացիները իրենց սովորական բոլոր գործունէութեանց կը հետեւին անյոգնաբար, թերեւս աւելի զօրացած եռանդով։

Մինչդեռ ռուսները տխուր յեղափոխութիւն մը կանցնեն։ Գործաւորական խռովութիւնները թերեւս առժամապէս խնդրուին նոյնպէս ալ սահմանադրական նպատակով եղած ցրցումները բռնի ուժով։ Բայց ռուս միապետականութիւնը կը կռուի գաղափարներու դէմ, առանց անոնց դէմ իր սեփական գաղափարները հակադրելու։ Բռնապետական կառավարութեանց դարեւոր սիլէմին մէջ կը թագնուի այս ճշմարտութիւնը՝ այն միջոցները որոնք ձեռք կառնուին ինքզինքին պաշտպանելու համար, անխուսափելիօրէն կը զօրացնեն գաղափարները, որոնք ուժաթափ կընեն բռնակալութեան ձեռքերը և կը փարեն անոր հզօրութեան սիւներուն տակերը։



Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎԱ

(Տօնախմբութիւն)

Գրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարօրինակ նա սարակութեան մէջ)

(Թարգմ. ռուսերէնից)

10

Բ.

(Շար. նախորդ թիւին)

—Ոչ, համոզված չեղաւ ասեց նկարիչը. չատեր իմ աբեստակիցներից, ի հարկէ այդպէս էլ կը նկատէին. թերեւս իրապէս այդպէս էլ պէտք էր նկարել. ճշմարտութիւնը, տրամաբանութիւնը եւ «ստեղծագործ իրականութեան» տօնը այդպէս են պահանջում։ Բայց ես չեմ կարող. իմ կարծիքով կնոջը մերկ այն ժամանակ կարելի է կտաւի վրա նկարել, երբ գեղեցկուհի է։

Եւ անկարող եմ, չեմ ուզում, ի վիճակի չեմ կնոջ մարմնի մերկութիւնը նկարել, երբ նա անճոռնի է։ Ինչ որ կնոջ վրա անճոռնի է. պէտք է թագցնել։ դաս հվիգ վէյբ լինի, պէտք է միշտ գեղեցիկ, փարթամ, նուրբ եւ պայծառ լինի։

—Էհ, բայց հվիգ վէյբլիկ բոլորովին մարմնի համար չէ ասված։

—Այո, բայց այն ամեն մէկին առանձին կերպով է ներկայանում. ամենքին իրեն յատուկը։ Մեզ նկարիչներիս համար մարմնի ձեւերը, հոգու նոյն երաժշտութիւնն է, ինչ որ ուրիշները գտնում են կնոջ խօսակցութեան, երգի, ոտանաւորների կամ թէ նրա հոգու եւ սրտի սիրագործութիւններում։ Գեղեցկութեան հիմնագիծը տէր ինձ եւ ահա իմ «էվրիգ վէյբլիկը»։ Իսկ մեր տափակաքիթ, խոշոր այդոսկրներով պեպենոտ դէմքով հիւսիսում գեղեցկութեան հիմնական դիծը շատ թոյլ է։ Տանելի դէմքեր պատահում են, բայց կերպարանքնե՛ր...ոհ, սարսափելի Հազիւ հազ կաշիով պատած ոսկոր կամ եգիպտական մատաղջ...

Բուրունը մտածման մէջ ընկաւ եւ յետոյ գլուխը կախելով ու կակազելով խոստովանեց.

-Ես ուզում էի օրինակը Վիկտորիա Պավլովնայից նկարել։

—Այո, բարեկամս, սրտակցելով համաձայնեցի ես, նա լաւ օրինակ է ձեզ համար։ Նրանում գեղեցկութեան տասնդ գծերը այնքան շատ են որ կարելի է չփոթվել։

—Չէ ցանկանում։ գանգատվող նեղութեամբ առարկեց նկարիչը։ Շատ ափսոս. չէ կամենում։ Մինչեւ անգամ քարկացաւ երբ սկսեցի համոզել։ Բայց ինքն էր որ գաղափարը յղացաւ։ Եւ ինձ հետ համաձայն է...

—Ի՞նչում է համաձայն։

—Որ յաւերժահարսը պէտք է գեղեցկուհի լինի... բայց այդ գեղեցկուհին ուր գտնե՞մ ես։

Նկարչի աչքերը բոցավառվեցին։

—Բայց. իրօք գեղեցիկ է, չէ՞... հիացումով, կարծես հակառակ իր կամքին չարամիտ հետաքրքրութեամբ հարցրեց ինձ։

Ես գլխի շարժումով համաձայնեցի։

—Տանջող է... չչնչաց նկարիչը գրեթէ չարութեամբ կրակոտ նայածքը պարոիկի տափարակի կողմը ուղղելով։ Տանջող է, սատանա. մի օր մէկը կսպանէ այդ աղջկան..

Իսկ տափարակից. յայտնիկի թփերի մօտից դէպի մեզ էր թռչում աղմկալի խօսակցութիւն եւ ծիծաղի ձայները։

—Ոչ դուք բարձրացէք։ Դուք բարձրացէք պարծեցաք, ուրեմն հասէք։

—Հո հո, հո, այդ խոշոր փորով։

—Որ փղերը չիշերի վրա քայլում են, այդ ես տեսել եմ, բայց ծառերի վրա, բարձրանա՞լ։

—Գործը ինչումն է, պարոններ, ձայնեցի ես ազմկողներին Բուրունի հետ մօտենալով։

—Այ, ծիծաղից խեղդվելով, պատասխանեց Զվե, ինչուը, Վիկտորիա Պավլովնան ըստ սովորականին, մեզ ծաղրածուների է վերածում։

—Ստում է, ստում. պապ, մի հաւատացէք, ուրախ-ուրախ առարկեց Վիկտորիան, ես չեմ վերածում, իրենք են։ Կամաւորներ։

—Գիտէ՞ք, այստեղ Շիլլերի «գաւաթ» բալլադայի պէս մի բան կայ. «ով է այն հոչակաւոր ասպետը կամ պարզ զինուորը»...

—Հասկանում է՞ք, Զվերինցեւին ընդմիջեց Զեմակին. տաքացած կարմրած, արբած եւ ծիծաղելով. Պետր Պետրովիչը հիմա, խնդոյն պէտք է բարձրանայ այս մայրիի վերա. այնտեղից պէտք է վերցնէ սարեակի բոյնը եւ պիտի դնէ Վիկտորիա Պավլովնայի ոտքերի առջեւ։

—Իսկ ես դրա փոխարէն Պետր Պետրովիչին երեք անգամ պէտք է համբուրեմ։

Կլորիկ, հատլիկ, չէչունչա բանկոնով Պետր Պետրովիչը, ոտքերը եղանի պէս չռած, ձեռքերը կողերին թխմած կանգնած էր մայրիի տակը եւ ծիծաղելիօրէն նայում էր ծառի բոլորովին հարթ բունին, որ ցցուել էր առանց ոստի, ճիրմակ, սիրական խուլ երկրին մէջ հնադարեան թմբութեան մէջ ապրող մեր եղբայրներուն իրական յառաջդիմութեան զօրաւոր դարկ մը տալու համար։

***

ԱՆՑԵԱԼԸ

Մանուկ հասակիս անհո՛գ տարիներ,
Էՙր այդքան արագ անհե՛տ սլացաք.
Պատանի կեանքիս երա՛զ գարուններ,
Ինչո՞ւ այդքան չուտ դուք թառամեցաք։

Միթէ՞ վաղ թէ ուշ՝ կեանքը իր դաժան
Սեւ վշտի մասը պիտի մոռանար.
Նա՝ մեր Հուսեանց ընկերն անխափան՝
Միթէ ձեռնունայն լուռ կը հեռանար..

Միթէ՞ վշտանար ճակատ մը դրժգոյն
Ցեր մոայլ խոհեր յար կը ծփային
Մութ-փոթորկայոյզ ովկէանի սՙհանգոյն.
Անհաճոյ վայր մէր մեր գուրգուրանքին...

Կամ թէ հէգ սիրտս, սիրտս վիրաւոր,
Հառաչանքներու խորունկ մի անդունդ՝
Անկա՞յ մնաց՝ ժպտելու անզոր,
Լուռ մենութեան մէջ գտնելով սրնունդ։

Օհ, վիրաւորէք ձեր գոյնով, բոյրով,
Սրտիս մէջ գարուն մծաղկեցնելու,
Թող շրթունքներս միակ համբոյրով
Նեկտա՛ր ծծեն կարմիր սրերու...

ՀՐԱՆՏ

Բարիզ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Պարսկահային վիճակուած է ապրիլ Ասիոյ ամենէն խուլ անկիւններէն միոյն մէջ, ուր ոչ դիւրին հաղորդակցութիւն կայ բուն երկրին մէջ և ոչ ալ արտաքին աւելի քաղաքակիրթ երկիրներուն հետ. քանի մը տարիներէ ի վեր հոն ալ մեծ եռանդ մը սկսած է դպրոցներ ստեղծել, եղածները բարեկարգել. մամուլ ստեղծել, բարեգործական ընկերութիւններ — ընթերցարաններ հաստատել. մէկ խօսքով ստեղծել բոլոր այն հաստատութիւններն և հիմնարկութիւնները, որոնք նշաններ կը կազմեն հասարակութիւն մը խորունկ քունէն արթննալու։

Այսօր Պարսկաստանի մէջ ըսկըսած է երկու թերթ հրատարակուիլ. մին Զուղայի մէջ «Նոր Զուղայի Լրաբեր» անունով, մըսը Թաւրիզի մէջ «Ազդարար» անունով։ Զուղայի թերթին սիւնը, ինչպէս կը նկատուի, կը կազմէ Բագրատ վարդապետ Վարդազարեանը, իսկ Թաւրիզինը Մաշտոց վարդապետը։ Երկու կրօնաւորներն ալ երիտասարդներ են, մին ճեմարանի ուսանողէն և նովկասահայ, միւսը Ներսիսեանի սանէն և տաճկահայ։

Այնպէս որ այսօր Պարսկաստանի մամուլին դլուխը կանգնած են երկու երիտասարդ կրօնաւորներ. երկուքն ալ երիտասարդ, եռանդուն, և սեւ վերարկուն հագած իրապէս ժողովրդին ծառայելու համար։ Կը շնորհաւորենք զիրենք և կը ցանկանք որ այնքան կարողութիւն և ժամանակի ոգին ըմբռնելու ընդունակութիւն ունենան որ կարենան իրենց շուրջը հաւաքել և Պարսկաստանի աշխարհական երիտասարդ մտաւոր ուժերը, այդ Ա-

սիական խուլ երկրին մէջ հնադարեան թմբութեան մէջ ապրող մեր եղբայրներուն իրական յառաջդիմութեան զօրաւոր դարկ մը տալու համար։

***

ԿՕՐՔԻԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍ ՍՊԱՆԵՐՈՒՆ

Մեր աշխատակիցներէն մէկը որ Բեթերսպուրկէն կը վերադառնայ, մեզի բերաւ Մաքսիմ Կօրքիի մէկ նամակին բնագիրը, ուղղուած Բեթերսբերսպուրկի կարնիզօնի սպաներուն որք բնաւ մասնակցութիւն չունեցան յունվար 9ի դէպքերուն։

Այս նամակը ստորագրած էին 459 հոգի.

Անշուշտ այս նամակն էր որ պատճառ եղաւ հոչակաւոր գրագէտի բանտարկութեանը։

«Այս տողերը կը գրենք ահաւոր բոպէի մը մէջ, այնպիսի օր մը որ Ռուսիա երբէք պիտի չմոռնայ։ Կը գրենք այն արեան ազդեցութեան տակ, որ պիտի թափուի մայրաքաղաքին շատ մը փողոցներու մէջ։ Մանաւանդ շատ յուզուած ենք երբ կը տեսնենք թէ սարսռուած ենք մնալ լոկ վկաներ այն սարսափելի տրամիտին որ մեր աչքին առջեւ տեղի պիտի ունենայ։ Մեր զգացումները վերին աստիճանի դրգռուած են... Սակայն մեր մտքերը յստակ են։ և մենք կատարելապէս կըմբռնենք պատմական խոր նշանակութիւնը այն բանի, որ մեր առջեւ տեղի ունեցաւ։ Այժմ մեր պարտքն է լուծել այս խնդիրը և ձեզի բացատրել անոր մեղքը։

Պարոն սպաներ, անտեսական տեսակէտով զօրեղ երկրի մը մէջ սովը պարբերական է դարձեր, ամբոխը դատապարտուած է իր ուժերէն վեր աշխատանքի, մշտական զրկանքներու իւր ամենահրաժեշտ պէտքերէն, եւ

անխուսափելի քայքայման, ժողովուրդը որ յամառաբար անգիտակցութեան մէջ կը պահուի, անկարող է զարգացնել իր ուժերը։ Անձնական եռանդը և ժողովրդային երեւակայութիւնը զաւուած են պիւրոֆրտ իական իշխանութեամբ և ամէն նախաձեռնութիւն արգիլուած է։

«Անկարելի է այլեւս ապրիլ այսպէս։ Ռուս ժողովուրդը հացի, լոյսի եւ ազատութեան պէտք ունի. առանց անոր անիկայ չկրնար ըլլալ մեծ ազգ մը, նոյնիսկ չի կրնար պաշտպանել իր իրաւունքը և իր գոյութիւնը։

Այս նեղ դրութենէն ազատելու համար, որուն մէջ կը գտնուի այս բոպէիս երկիրը, միայն մէկ միջոց կայ,—ժողովուրդը ինքն իսկ է, որ կրնայ խնամել իր հիւանդութիւնները եւ բուժել իր խոր վէրքերը։ Եւ ասոր համար ռուս պետութեան տարրական նոր օրէնք մը պէտք է. Ռուսաստանը սահմանադրութեան պէտք ունի։

«Այս օրէնքը ոչ միայն ըմբռնած այլ եւ գծած են Զեմստվոներու ներկայացուցիչները, քաղաքային վարչութիւնները, պուրժուազիան, ռուս վաճառականները, երիտասարդ դասակարգականները և գործաւոր ամբոխը։ Այս զգացումը այնքան ծաւալ ստացաւ, որ ոչ մէկ արգելք չկրցաւ զայն կեցնել։ Այս զգացումը կը բորբոքի և պիտի շարունակէ բորբոքիլ հակառակ բոլոր ճնշումներուն, և քանի չպիտի մարի նոյնիսկ եթէ երբեմն—երբեմն արիւն ալ պէտք լինի հոսել։ Նոր ազատ բարեկարգումները ունենալու կամքը երբէք պիտի չյաղթուի որովհետեւ առանց անոնց անկարելի է շարունակել ապրիլ։ Այս միջոցին են դիմած բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ, և այս միջոցաւ է որ Ճապոն գտաւ իր ուժը, որուն հետ անյաղթ պատերազմ կրնանք։

«Միայն ռուս կառավարութիւնն է որ չուզեր և կամ չի կրնար ըմբռնել թէ ինչ որ պատմութիւնը կը յայտարարէ։

Այս կարճատես կառավարութիւնը վաղուց արդէն պատմութեան համար բայէն կանգնուեր, եթէ ազգաբնակութեան, ազգութեան և գերութեան մէջ բռնուած ժողովուրդը անոր դէմ իւր սեպհական բանակը չունենար։ Այո, կրնանք ըսել «իւր սեպհական բանակը» որովհետեւ դուք ձեր կըրթութիւնը ժողովրդի ծախքով ընդունեցիք, դուք ձեր թօշակները ժողովրդի դրամարկղէն կընդունիք, ձեր կրած սուրինները ու հրացանները ժողովրդի դրամով են գնուած։ Եւ դուք ինքներդ իսկ ժողովրդային զաւակներ էք, և ահա ձեզ են որ կը ղրկեն սպաննել ձեր եղբայրներն ու քոյրերը։

Ռուս բանակի սպաներ յաւ խորհեցէք 1905 յունվար 9ին Բեթերսպուրկի փողոցներուն մէջ անցած դարձածներուն վրայ, հազարաւոր մարդիկ կուզէին խնդրագիր մը մատուցանել ցարին։ Ասիկա բոլորովին խաղաղ գործողութիւն մըն էր, որովհետեւ գործաւորները երդուած էին կարգը պահպանել, և միայն ինքնապաշտպանութեան համար ուժ դիմել։ Կառավարութիւնը գիտէր որ հանրային ապստամբութիւնը վտանգի մէջ չէր։ Մեր ղրկած պատգամաւորութիւնը, որ տասը հոգի էին (ասոնց մէջ կային նաեւ այս նամակը ստորագրողներ ալ) յունվար 8ի երեկոյեան, եղած էր ներքին գործոց նախարարին, իր օգնականին և նախարարաց խորհրդին նախագահին քով։ Պատգամաւորութիւնը կուզէր կառավարութեան ցոյց տալ դրութիւնը։ Ասիկա կը պաղատէր որ ամեն ջանք ի գործ դրուէր արիւնաղեղ հանդիպումներէ զգուշանալ։ Այս ջանքերը ի զուր եղան։ Թեներալ մայոր Ռուսերպովի յայտարարեց որ կառավարութիւնը պէտք չունի իրենց ոչ տեղեկութեանց, ոչ ազաչանքներուն և ոչ ալ յայտարարութեանց։ Պ. Վիթթէն ըսաւ թէ ասիկայ իր նախաբարութենէն կախում չունի, և թէ ինքը չէր ցանկար որ ինքզինքը սխալ դիրքի մը մէջ դնէր՝ եթէ զբաղէր այդ գործով։ Իշխան Սվիատոպոլոկ-Միրսքի բնաւ չուզեց ընդունիլ պատգամաւորութիւնը հանդիպակաց Պ. Վիթթէի միջնորդութեան այս մասին, և ըսաւ թէ ինքը գիտէ ամէն ինչ և թէ ամէն միջոցներ ձեռք են առնուած արդէն և հրամաններն ալ տրուած։

«Այո, միջոցները լաւ էին ձեռք առնուած և արիւնը հոսեցաւ, և հաւանականաբար որոշած կէտերու վրայ որ ռուս աստիճանաւորները կը հակէին երբ անուք կը խորհրդակցէին այս նիւթի մասին, և իսկապէս ինչու ռուս կառավարութիւնը պէտք ունի քանի մը անձնաւոր մարդոց ազդեցութեան ու տեղեկութեան։ Ինչու նա պէտք ունի գիտակցութեան, պատուոյ և խելամտութեան որովհետեւ ան իր ծառայութեան համար ունի անթիւ քանակութեամբ գաղտնի ոստիկանական գործակալներ եւ բանակին ուժը։

«Ռուս բանակի սպաներ, դուք պարտականութեան մարդիկ էք։ դուք ստանձնած էք մեծ պատասխանատուութիւնը և պարտքը զոհել ձեր կեանքը հայրենիքի համար երբ պէտք լինի, հարցուցէք ուրեմն ձեր գիտակցութեան ո՞ւր է ձեր տեղը, յիմարներու հետ, որ միշտ պատրաստ են արիւն հոսեցնել, թէ մարտիրոս ժողովրդի հետ։

«Ի՞նչ, ողջերդ, պատուոյ զգացումն ունիք, ո՞ւր է ուրեմն ձեր տեղը։ անո՞նց հետ, որք կը վախնան նոյնիսկ խնդրագիր մը ընդունելու, թէ ամբողջ առաքինի և սրբազան Ռուսիոյ հետ։ Եթէ պատուոյ մարդիկ էք ձեռք մի բարձրացնէք անզէններու վրայ, մի ընդունիք ժողովրդին դրամը, այդ ժողովրդին որուն դուք ինքներդ կուզէք արիւնը հոսեցնել։

«Էր Ժուռնալ»

—❀❀—

ՌՈՒՍ ԿԵԱՆՔԷՆ

«Էր Ժուռնալ» թերթէն կը քաղենք Մաքսիմ Գորքիի կնոջ Բեթերսպուրկի ոստիկանապետին ուղղուած նամակը։

«Ցուսնվար 2ին ժուռնալս բանտարկուեցաւ Բեթրոքավլովսկի ամրոցին մէջ։ անոր արգիլուեր է սովորական զգեստները հագնիլ։ ու ստիպեր են որ բանտարկեալներուն յատուկ զգեստը հագնի։ արգիլեր են նաեւ գրիչ ու մելան ունենալ։

Անոր ունեցած բարակ զգեստները և բանտին խոնաւութիւնը պատճառ պիտի ըլլան հիւանդութիւնը կրկնելու։ Այդ տեսակ վերաբերմունքը ոչ մէկ բանով կարդարացուի։ մանաւանդ որ ամուսինս դատապարտուած մը չէ։

Այդ վարմունքը բոլորովին անարդարացի է և ես ձեզ կը խնդրեմ որ ամուսինիս արտօնուի ճերմակեղէն և կոշիկներ ստանալ։ ինչպէս նաեւ արտօնուի գրիչ, մելան և թուղթ ունենալ։ որպէս զի կարենայ աշխատիլ։»

* * *

Զօրավար Կրինպէրկ Իրքութսքի մէջ հիւանդ պառկած է։ Ան ցարին հաղորդեր է որ իրեն անձամբ յանձնուելիք տեղեկութիւն մը ունի։ Այդ տեղեկութիւնը ստանալու համար իր թիկնապահներէն մին և պետական խորհրդ. Պեզոպրազվը ղրկած է Իրքութսք։ որովհետեւ հիւանդ զօրավարը չէ ուզեր այդ տեղեկութիւնը ուրիշի

փայլուն յղկված, կարծես փոստի թղթով պատած։

—Դեհ, ծաղրելով ասում էր Վիկտորիան, Պեսար Պետրովիչ։ կատակ բա՞ն է։ երեք համբոյր է։ այդ երբեք երջանկութիւն է նշանակում։ դեռ հիմա դուք ինձ այդպէս չիք հաւատացնում...

—Երջանկութիւն է, երջանկութիւն, երկարացնելով առարկեց Պեսար Պետրովիչը։ բա՞ց մայրին էլ շատ-շատ հարմ է...

Ընդհանուր ծիծաղի մի նոր պայթումը նրա խօսքերը խեղդեց։ իսկ նա ժպտալով ձեռքերը թափում էր։

—Այո, բայց կը փորձեմ... ուր չենք կորուստ ունեցել, ծերութիւնս կը ցնցեմ... ու սկսեց բարձրանալ։ Մինչեւ հիմա էլ ծիծաղս գալիս է, երբ միտքս է ընկնում նրա գնդակաձեւ մարմինը, որի փոքրիկ ձեռքերը եւ ոտները մայրին գրկել էին փրանկֆուրթեան չորս կողմ երշիկների կերպարանք առած։ Պեսար Պետրովիչի մկանունքները չափազանց ճիգից այնքան լարվել էին որ նրա թեթեւ զգեստը ամբողջովին մարմնով էր լցվել։ վարտիքից ես սարսափում էի... երկու կանգուն չափ բարձրացաւ, ու տեղնուտեղը մնաց ծառին կպած։ ոչ ետ ոչ առաջ։ Միայն վիզը չիլայի նման կարմրեց իսկ բաճկոնը ծածկվեց քրտինքի խոշոր բիծերով։

—Պեսար Պետրովիչ, յանկարծ աղաղակեց Վանիչկան, սարսափահարի յուսահատական ձայնով՝ դուրս ցատկելով իմ մօտ գտնված յայսմիկի թերթի եռեւից եւ հանդիսականներին աչքով անելով՝ Պեսար Պետրովիչ ձեր վարտիքը պատռվել է։

Պեսար Պետրովիչը այդ խօսքերի վրա կծիկի պէս մայրիի վրայից վար գլորվեց։ Հանդիսականները վայրի ծիծաղով սկսեցին գոչել, թքել։ Զվերինցեւը, փորը բռնած, եզան նման բառաչում էր, Զեմսկին նոյնիսկ գետնին պարկեց խստերիքի ձայնով ծվաց։ Վիկտորիա Պավլովնան մի կանաչ ճիւղ վերցրած ծեծում էր Վանիչկային կարմրած, աղաղակելով։

—Այ, դու անպիտան ազեկ այ անպիտան։

Վանիչկան ինքզինքը հերոս էր ըզգում եւ միայն կծկվում էր։

Պեսար Պետրովիչը վրան մաքրելով եւ զգեստները շշափելով մօտեցաւ Վիկտորիային ու մեղաւորի պէս շրթունքները ցցելով ասեց։

—Բարձր է։

—Իսկ դու, ջահիլ խոզուկ, դառնալով Վանիչկային, ինչպէս կարող ես ծաղրել քեզնից մեծերին։ բացի այդ ստում ես։ դէ նայիր։ պատռված չեն։

Պեսար Պետրովիչին միւսները յաջողելով իրարու եռեւից փորձեցին իրենց բաղդը, բայց անիծեալ մայրին կարծես կախարդված լինէր։ ոչ ոքի չէր յաջողվում բարձրանալ։ Ամենից շատ բարձրացաւ Կէլլպովը, բայց նա էլ չը կարողացաւ հասնել նոյն իսկ ամենաստորին ոստերին եւ յուրախութիւն միւս անյաջողների վար իջաւ։ Վիկտորիան Զվերինցեւին թոյլ չը տուեց որ մրցի։

—Ոչ, ոչ մասնագէտները բացառութիւն են կազմում։ Ինչ զարմանալի բան եթէ նախկին մարմնամարզիչը կը կարողանայ ծառը բարձրանալ։ Բացի այդ, պապ, ես քեզ առանց սարեակների էլ եմ համբուրում։

Բուրունը, առանց ծիծաղելու, ընդհակառակը առանձին լրջութեամբ մթագնած դէմքով, նոյնպէս փորձեց բարձրանալ։ Ինձ թւաց որ Վիկտորիան հետաքրքրութեամբ, աւելի ուշադրութեամբ եւ սրատակութեամբ էր դիտում նրան, քան միւսներին։ եւ կարծես դէմքը մոայլվեց անհանգիստ սպասողական վիճակից։ բայց Բուրունը, մի քիչ ծառի տակը շարժվելով, կարծես մրկանունքները կարգի բերել ուզելով, վարանոտ աչքով դիտեց հողի եւ թուչունի բունի միջեւ եղած տարածութիւնը ու բարկութեան կարմրութեամբ շիկնելուց յետոյ, ետ նահանջեց։

—Բարձր է։ մրմնջեց նա, ինչպէս Պեսար Պետրովիչը։

—Հը, բարձր է, ատամների արանքով խօսեց Վիկտորիան, նման այն դերասանուհիների որոնք բեմի վրա խորհրդաւոր պատասխաններ են նետում կողմնակի կերպով։

Այդ րոպէին Վանիչկան կրկին ամենքին ծիծաղեցրեց երեւան գալով բեռնված մի մեծ չարժուն սանդուխքով։ սանդուխքը դրեց անիծեալ ծառի մօտ, բարձրացաւ վրան, առանց փոքրիկ դժուարութեան վերցրեց թռչունի բունը եւ նետեց Վիկտորիայի առջեւ։

Վիկտորիան երեխայի նման ծիծաղում էր եւ ծափահարում։

—Այ խելացի Վանիչկա։ իսկական կոլումբոս։ ինչպէս դրան չը համբուրե՞լ, այդպիսի ծաղրածուին։ բոլորն էլ ուժաթափ են լինում եւ ոչինչ չեն կարողանում անել, դժուար է, բարձր է։ Իսկ նա է միայն խելացին։ սանդուխքը բերեց եւ ամէն բան վերջացաւ... Ախ դու Վանիչկա, եթէ իմանաս թէ որչափ ինձ հաճելի եղար։ եւ ինչ իմաստուն օրինակ հանդիսացար։

Վիկտորիայի նայուածքում, որով նա տակից նայում էր ամաչած Բուրունին թէ ծաղր եւ թէ վիրաւորանք կար։

(Շարունակելի)

—)o(—

մը յանձնել բացի ցարին առանձին սուրհանդակէն։

* * *

«Ֆրանք. Ցայթ» Թերթին Բեթերսպուրկի թղթակիցը ներկայ նահանգապետ Թրեպովի հետ տեսակցութիւն մը ունեցեր է, որուն միջոցին Թրեպով հետեւեալը յայտնած է։

«Խռովութիւններուն շրջանը արդէն անցաւ։ Գործաւորական շարժումներ հիմակ մէյ մէյն տեսական գործերու կը վերաբերին այս վայրկեանիս գործադուլը կը շարունակուի միայն վագոններու գործարանին մէջ, որ կը պատկանի բաստեաններու։ Բայց հոն ալ շուտով պիտի վերջանայ։

Սահմանադրութեան փափագի իրագործումը անկարելի է։

Այս պատերազմի պահուն ժողովրդեան կամ Զեմստվոյի ներկայացուցիչներու ժողով գումարելու մասին խօսքերը անտեղի է։ Ցարը ինքնակալ է ժողովրդային կամքով։ Մենք համոզուած ենք որ պատերազմը պիտի վերջանայ մեր յաղթանակով։ Իմ պաշտօնատարութիւնս ժամանակաւոր է։ Ցուսով եմ որ ցարը շուտով զիս պիտի ապատէ Բեթերսպուրկի Ժեներալ նահանգապետութենէ։

* * *

Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ ժէնէրալ Թրէբով երկրագործական նախարարին հրամայեր է որ իրեն քով ներկայ, Վերջինս պատասխաներ է որ ինք նախարար ըլլալով Թրէբով իր ստորագրեալն է և չի կրնար իրեն այդպիսի հրաման մը ղրկել։ Նախարարը և ինչպէս միւս նախարարները որոշած են այդ անպատուութեան համար հրաժարական տալ։

Ցարը այդ միջադէպի մասին իմանալով խիստ բարկացեր է Թրէբովի վրայ։

* * *

Կովկասի յուզումները հետզհետէ լուրջ կերպարանք կառնեն. կառավարութիւնը Կովկասեան մեծ յուզումներէ կը վախնայ։ Լեհաստանէն ալ խռովիչ լուրեր կուգան։ Յեղափոխական գրգռումները կը սաստկանան։

Գործադուլները կը շարունակուին նոյնիսկ Բեթերսպուրկի մէջ հակառակ Թրէբովի յայտարարութեան և ամեն կողմէն սահմանադրութիւն կը պահանջեն. բոլոր դասակարգերը։ Կուսի թէ մեծ իշխանները համաձայն են որ պատերազմը դադարի։ Եւ շատ հաւանական կը թուի, որովհետեւ ժողովրդի պահանջներէն մին ալ պատերազմի դադարումն է։

Թէ պատերազմը վարել և թէ ներքին մեծ յուզում ու ապըստամբութիւն խեղդել։ շատ դժուար է և կառավարութիւնը ապըստամբութեան ուրուականէն ազատելու համար։ կարելի է որ պատերազմին վերջ տայ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարական ազգային ժողովը իր նիստը վերջացուց, նախարարապետը իշխանի մէկ հռագրովը գոցեց ժողովը։

— Գերմանական թերթերը իշխանի Պերլին գտած լաւ ընդունելութեան առթիւ գովասանական տողեր կը նուիրեն իշխան Ֆէրտինանտի լուրջ և Պուլկարիան բարձրացնող քաղաքականութեան համար։

— Հակակառավարական թերթի գլխաւոր աշխատակիցներէն երբեմնի Մակեդոնական Բ. կոմիտէի նախագահ Միխայէլովսքի կենսաթոշակ ընդունեց կառավարութենէն և այդ առթիւ խստօրէն կը քննադատուի։ իսկ գրագէտ Սթրաշիմիրովի արտաահման փախած է։ վախնալով որ զինքը պիտի բանտարկեն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Մակեդոնիոյ պուլկար դպրոցներուն ընդհանուր տեսուչը, որ ձերբակալուած էր Պոլսոյ մէջ, ազատ արձակուելէն վերջ մեկներ է Իսկիւպ։

— Ֆրանսական դեսպան Քոնոթանի և թուրք կառավարութեան յարաբերութիւնները լարուած են, որովհետեւ Թրքական փոխառութիւնը և զանազան պատերազմական գործիքներու ապըստրանքը գերմանիոյ մէջ պիտի ըլլայ։

Կըսեն թէ Քոնոթան պիտի հրաժարի դիւանագիտական պարտութեան պատճառով։

— Թուրքիա շարունակ զօրք և պատերազմական նիւթեր կը ղրկէ դէպի Մակեդոնիա։ կը կարծուի թէ Պուլկարիոյ դէմ պատերազմի պատրաստութիւն կը տեսնէ։

ՌՈՒՍԻԱ

Փետր. 1ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ Բութիլովի գործարանին մէջ գործադուլը վերսկսուեր է։ Գործադուլը կը շարունակուի նաև ուրիշ չորս գործարաններու մէջ։

— Վարշավայի մէջ գործաւորները սկսած են աշխատիլ, մինչեւ օրս ձերբակալուած 600 հոգիէն բանտը մնացած են միայն 213 հոգի։

Իշխանութիւնները Լոտզի պանսան գերեզմանատուններու մէջ թաղած են սպաննուած 144 հոգի, իսկ հիւանդանոցները ընդունած են 200 հոգի։ 16 օրէ ի վեր Լոտզի թրամվայը չի գործեր։

Սատնովիցի մէջ գործադուլը կը շարունակուի. գործաթող բանւորներուն թիւը 60,000ի կը հասնի. 15000 զինուորի յանձնուած է կարգը պահպանել։

ԱՆԳԼԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԵՈՑ ՀԱՄԱՐ

Փետրվար 1ին Լոնտոնէն կը հեռագրեն թէ երեսփոխանական ժողովի անդամներէն շատերը յունվար 31ի ցորեկէն վերջը հաւաքուելով Ուէսթմինիսթր Օթէլը Լորտ Սալիսպուրիի նախագահութեամբ ժողով մը կազմեր են խորհելու համար Մակեդոնիոյ կացութեան մասին։

Ժողովը միաձայնութեամբ քուէարկեր է Հերպերտ Կլատստոնի առաջարկը, որով կը յայտարարուի թէ Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ տիրող անիշխանութիւնը կը շեշտէ Անգլիոյ և միւս պետութեանց պատասխանատուութիւնը, ու հաստատ է վայրկեանը որ Լորտ Լանսդուն արմատական բարենորոգմանց ծրագիր մը ներկայացնէ միւս պետութեանց։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԵՐ

Լոնտոնէն կը հեռագրեն թէ վաշինգթոնէն քանի մը թղթակիցներ կը հեռագրեն որ խաղաղ միջամտութիւններ տեղի ունեցած են պատերազմը դադրեցնելու համար։ Իբր թէ միջամտելու համար խորհրդակցութիւններ տեղի ունեցած են Ամերիկայի արտաքին գործոց նախարար Հէյի և Ռուսիոյ Ֆրանսայի ու Ճաբոնիոյ դեսպաններուն միջեւ. Բայց Լոնտոնի մէջ այդ լուրը պաշտօնապէս կը հերքուի։

ՃԱԲՈՆԻԱ

Թոքիոյէն փետր. 1ին կը հեռագրեն որ արտաքին գործոց նախարարը Անգլիոյ հետ կապած դաշնակցութեան տարեդարձին առթիւ ճաշկերոյթ մը տուեր է։

— Կառավարութիւնը Անգլիոյ Գլասկով քաղաքին մէջ 50 մեծ լոքոմոթիւ ապսպրեր է։

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե. Ֆրանգեանի
«ԱՏՐՊԱՏԱԿԱՆ»
Պատկերազարդ ծովածուի

«Ատրպատականը» պարունակում է իր մէջ մի շարք յօդուածներ (թւով 30 35) որոնք զանազան ժամանակներում լոյս են տեսել պարբերական հրատարակութիւնների մէջ, մեծագոյն մասը ՄՈՒՐՃ ամսագրում, կը լինեն նաեւ նոր գլուխներ, իսկ արտատպումները լոյս տեսնելու են նոր սրբագրութեամբ աւելի ընդարձակած և ճոխացրած։ Գիրքը՝ որ տպագրուելու է Թիֆլիզում, ունենալու է 450—500 էջ, 50—60 պատկեր և տեսարաններ։

Բաժանորդագինն է Ռուսաստանում 1 ր. 50 կոպէկ։ Պարսկաստանում 1 թուման, իսկ Արտասահմանում 5 ֆրանք։ Բաժնեգինը կանխիկ է. լոյս տեսնելուց յետոյ գրքի գինը կարող է գգալի կերպով բարձրանալ։

Բաժանորդագրութիւնը ընդունւում է։

Ռուսաստանում.—Թիֆլիսում «Հէրմէս» տպարանում. Բաքում Պ Տիգրան Ռաշմաճեանի մօտ. Երեւանում Սարգիս Օհանջանեանի մօտ. Բոստով դոնի վրայ Պ. Զաքար Ռուստամեանի մօտ Բաթումում Սողոմոն Յարութիւնեանի մօտ։

Պարսկաստանում.—Թէհրանում Պր. Յարէթ Խաչատրեանի մօտ. Թաւրիզում Պ. Պ Ալէք Բաբաեանի և. Յովսէփ Յովհաննէսեանի մօտ. Սալմաստ Հեղինակը մօտ.

Արտասահման.—Եգիպտոս— Դոկտոր Կ. Փաշաեան—Ալէքսանտրիա. Ամերիկա.—«Հայրենիք ի խմբագրատուն (Պոսթոն) Պուլկարիա. — «Շարժումի խմբագրատունը—Վառնա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Տօքթոր Թորոսեան կընդունի ամէն տեսակ հիւանդներ, կէսօրէն վերջը ժամը 2էն մինչեւ 4
Բնակարանն է
Փողոց Տունաւսքա թիւ 3

ՅԱԿՈԲ Կ. Հ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

(Սարաֆ) ՎԱՌՆԱ

Զանազան ընկերութեանց արժեթղթեր կը գնէ։

7—12

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

—)o(—

Տարին վերջացաւ և մեր բաժանորդներէն շատերը դեռ իրենց բաժնեգինները չեն վճարած։

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին։ Ինչպէս կերեւի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթը տէմբրը ձրի կառնենք, գրաշարները ու տպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր, այլ օդով կապրինք։

Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք ղրկեր մարդու։ Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ։

———

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна